Մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Գիտելիքի, գրի ու դպրության օրվա կապակցությամբ

01.09.2021

Սիրելի մանկավարժներ, աշակերտներ, կրթության համակարգի նվիրյալներ, Շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի, գրի ու դպրության օրվա կապակցությամբ՝ ցանկանալով ուսումնառության նկատմամբ մեծ հետաքրքրությամբ ու ձեռքբերումներով լի ուսումնական տարի:

Առանձնահատուկ շնորհավորում եմ առաջին դասարանցիներին, ովքեր քայլ են անում դեպի նոր կյանք՝ լի բազմաթիվ անհայտներով: Անհայտներ, որոնք կհաղթահարվեն մեր սիրելի ուսուցիչների նվիրական աշխատանքի և, իհարկե, ծնողների հետևողականության շնորհիվ:

Իսկ ուսանողներին՝ հատկապես առաջին կուրսեցիներին, մաղթում եմ նպատակասլացություն և դժվարությունները հաղթահարելու կարողություն: Չէ որ Ձեր լավ մասնագետ լինելով է պայմանավորված մեր երկրի կայուն առաջընթացի ապահովումը:

Համոզված եմ, որ ձեռքբերվող գիտելիքները, հայեցի կրթությունն ու ազգային արժեքների ոգով դաստիարակությունը կնպաստեն սեփական ունակությունների և կարողությունների լիարժեք դրսևորմանը:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիս նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ՝ մաղթելով քաջառողջություն և նպատակներին հասնելու մեծ ձգտում: Աստված պահապան բոլորիս: